

ՎԱՐՉՈՒԹԻՒՆ «ՆՈՐ ՕՐ»

ՆԱԽԱ ԿՈՒՄ ԵՒՆԻ ԲՊԲԱՆՈՒԹԻՒՆ  
ՊԵՏԵ ԵՒ ՈՒՂՅԱԼ ԱՊ  
Վարչութիւն «ՆՈՐ ՕՐ» Լրագրի  
ԳԱՀԻՐԷ

Direction du journal  
NOR-OR  
Caire  
Ձեռագիրներն եւ չեն գործարար,  
ԱՐՏՈՆԱՏԵՐ Ժ. ՄԻՆՆԻԷ

# ՆՈՐ ՕՐ

Լ Ր Ա Պ Ի Ր  
ԱԶԳԱՅԻՆ, ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ ՈՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ  
ԿՐ ՀՐԱՏԱՐԱՊՈՒԻ ՉՈՐԵՔՇՈՐԹԻ ԵՒ ՇԱՐԱԹՅՈՐԵՐԸ

ԲԱՍՏԱՆԱԿԱՆ ԳՐԱԳՐՈՒԹԻՒՆ

ԳՐԵ. ՈՂՅ	
Վարչութիւն Եւրոպայի սարկիսի	50
» » վեցամսեայ	30
Շրջակայից » սարկիսի	60
» » վեցամսեայ	35
ԱՐՏՈՆԱՏԵՐՆԻ ՉԱՏԱՐ	
Տարեկան . . . . . Գրանգ	18
վեցամսեայ . . . . . »	10
ԲՈՒՍՈՅ ԵՒ ԿՈՂՄԱՍԻ ՉԱՏԱՐ	
Տարեկան . . . . . Բուրլի	7
վեցամսեայ . . . . . »	4
ԲԱՍՏԱՆԱԿԱՆ ԿՐԱԳՐՈՒԹԻՒՆ ԵՒ ԲՊԲԱՆՈՒԹԻՒՆ	
Թերթիմ վարչութիւնի վրայ է	

ՇԱՐԱԹ ՄԱՐՏ 31/13 ԱՊՐԻԼ 1901 ԲՍԱՆ ՓԱՐԱՅ ՈՂՋ Ա. ՏԱՐԻ ԹԻ 82

## ԱՂՔԱՏԻՆ ԲԱԺԻՆԸ ՉԱՏԱԿԻՆ ԱՌԹԻԻ

Փարիզի մէջ կին մը վերջերս ծայրահեղ չքաւորութեան մէջ ինկած էր: Գիտարարութիւն և անօթութիւն զինքը շատոնց անճանապահ ըրած պիտի ըլլային. եթէ իր մեկհատիկ զաւակը աշխարհի վրայ գոյութիւն ունեցած չըլլար, որուն վրայ այնքան զորովադու ինքզինքը կը զուգուրար:

Օր մը այն աստիճան ծայրահեղութեան հասաւ, որ պատու մը հացին համար մայր ու զաւակ ա՛ր թաշեցին: Զաւակն արտասուքը չի կրցան զսպել մայրիկը, որ անմիջապէս փոքոց նետուեցաւ և իր դէմը ելած փռան մը ճեպիկահէն քաշ մը հաց վերցնելով, կրակի պէս վազեց զաւակին քով: Զուրին մէջ թաթխած այդ պատառ մը հացով մայրիկը հազիւ իր անօթի զաւակին բերանը կը թռչէր ու կը մխիթարէր զայն, ստիկանը վրայ հասաւ, ձերբակալեց զինքը:

Տասնը հինգ օր բանտը մնալէ վերջը, մայրիկը ներկայացուեցաւ դատարան. այն դատարանը որուն կը նախագահէր բարեբաղդարար Պ. Մանեօ, փարիզի էն գլխաւոր և խղճամիտ դատաւորը:

Հասարակ ժողովուրդին նամանականդ ընկերավարականներուն համար օրուան խնդիր մը եղած էր ասի: Ինչ ըսել է դատաւարանը կին մը, որ իր անօթի զաւակին համար պատառ մը հաց վերցուցեր է փռուէ մը, կըսէին ընկերավարականները:

Օրէնսդէս, փաստաբան, դատաւոր ասոնց ամենքն ալ այս աղմուկին առջեւ անտարբեր, մինչև անգամ կը ծիծաղէին այսքան հասարակ բանի մը շուրջը զաւանդ իրարանցումին վրայ: Երկու անգամ երկուք չորսի պէս համոզուած էին թէ՛ կինը ուրիշի մը ապրանքը վերուցած ըլլալուն համար, անպատճառ քանի մը օր բանտ պիտի պառկի:

Պ. Մանեօ կ'ուզէ խղճալիս ըլլայ կուզէ չըլլայ, խիղճը օրէնքին հետ ու է կապակցութիւն չունի: Եթէ Պ. Մանեօ միմիայն իբր մարդ վրձնէ, թերևս կրնայ անպարտ արձակել, իմ խիղճս այսպէս կը հրամայէ

ըսելով՝ բայց քանի որ իբր դատաւոր պիտի վճռէ հարկադրուած է օրէնքին այս ինչ յօդուածը նոյնութեամբը գործադրել ընել (արիւթէ): Ուրեմն Պ. Մանեօյի խիղճը կ'իջէ հրամայէ իսկ կինը անպարտ արձակել, քանի որ օրէնքը չի հրամայեր, Պ. Մանեօ բան մ'ալ չի կրնար ընել, նամանականդ որ կինը չուրանար կոր իր յանցանքը կ'ըսէին օրէնքէն հասկըցողները:

Վերջապէս Ինքերկայութեան հետ ասորբեր բազմութեան մայրիկը ասեան կանչուեցաւ հարցաքննութեան համար, որ զաւակին ձեռքէն բռնած, անձամբ կը պաշտպանէր իր դատը, ասանց քի է փաստաբանի օգնութեան: Արդարև ինչո՞ւ պէտք ունենար փաստաբանի իրենք քովի գաւակը, իր դժգոյն և զիջած դէմքը որ մատնանիչ կ'ընէին երկարատև անօթութեան մը հետքն, միթէ փաստաբանի մը պերճախօսութեան չափ ալ չի պիտի կրնային ներգործել դատաւորին ողջոյն վրայ:

Ահա՛ այս էր մայրիկին յոյժը, և իրականացաւ:

Ի մեծ հիացում օրինաց, օրէնսդէսներու, փաստաբաններու, իրաւագէտներու, Պ. Մանեօ՝

Անպարտ արձակեց անօթի մայրիկը:

Շատերը կարծեցին թէ Պ. Մանեօ՝ գողացող մայրիկը անպարտ արձակելով աստատարած քանուեցաւ օրէնքին գէժ, և կերպով մըն ալ սղբաւորը չփացուցած ու անօթինն ըրուն գողութիւնը քաշալիքած եղաւ:

Եւ առարկեցին թէ՛ կարգ մը անօթիներ չլիտնալով Պ. Մանեօյի այս ընկերավարական վճիռէն՝ վազը աղատ աստիճանը պիտի գտնան ասոր անոր փռան հացը իւրացնելու: Բաց աստի, եթէ ասով բաւականանան շատ լա՛ւ. որովհետև մարդ մը անօթի վիճակին մէջ փողոյն ալ կը պառկի, բայց անգամ մը սր փորը կշտացնէ, չսրս կողմը գոց պռոկելու տեղ մը կը փնտռէ, այդ տեղն ալ գտնելէն վերջը, կակուղ անկողին մը, և անկողինէն վերջն ալ կը նայիս ուրիշ բան մը . . . կուզէ եւն: Վերջապէս կարգ մը բնական պիտոյքներ որոնց ամենին կարգաւ յագուրդ տալ կուզէ:

Ո՛չ, Պ. Մանեօ եթէ ուզէր կրնար փոխանակ իր եզակի վճիռովը նորորութիւն մը ստեղծելու, անօթի մայրիկը քիչ մը բանտարկութեան զատապարտել և միևնոյն պարագային յատենի ժողովոյ հանգանակութիւն մը բանտը ու արդիւնքը նախընտրել իրեն, ինչպէս որ ժամանակին Անգղիոյ մէջ պատուար մը նմանօրինակ պարագայի մէջ յանցաւորին պատիժը անօթիներով հանդերձ, ափին մէջը զրամական նուէր մը սպրդեցուցած էր:

Պ. Մանեօ չըրաւ այսպէս և փոխանակ դատաւարանու անօթի մայրիկը՝ անպարտ արձակեց, որովհետև նա զգաց թէ իրաւի փնջը մը յափշտակուած էր, բայց այնպիսի մեղմացուցիչ պարագայի տակ որ գերազանցաբար եզակի կը համարուեր: և այսպիսի եզակիութիւն մ'ալ կ'արժէր եզակի վճիռով մը փոխարինել:

Երկրորդ՝ ո՛վ գիտէ թէ Պ. Մանեօ անուղղակի կերպով ալ շեշտել է ուզեց յիզաշըջման պէտքը ընկերական կենցաղավարութեան արդի պայմաններուն, որ այնքան անկարելի էր դարձած են:

Այո՛, արդի-ընկերութեան վիճակը այնքան անտանելի դարձած է որ մէկ օրէն միւսը բարեօրուելու պէտք ունի: Անգին հարուստներ իրենց միլիոններուն հետ կը խաղան, ասորին աղքատներ իրենց կեանքին հետ: Ուրեմն պարտք և պահանջքի ընթացիկ հաշիւ մը (գոնթ գուռան) բանալու պէտքը անհրաժեշտ դարձած է հարուստին և աղքատին մէջ — ոչ թէ Պ. Պուլտոնայի բարոյաժին չափ — այնպիսի կերպով մը որ ոչ հարուստը ձանձրանայ ոչ ալ աղքատը չփանայ:

Բաց աստի անհոյ եղիք, մեր ակնարկած աղքատները շատ շուտ չեն չփանար՝ որովհետև մենք մտրացկանները չենք ուզեր ակնարկել, հապառաքանները որ ասորին անգին մտրալու ամենալավ անօթի զիջելները կ'անցնեն:

Ուրեմն ողորմինք աղքատներուն և այն աղքատներուն որ քաշալիքուելու արժանի են, ինչպէս այն ա-

նօթի մայրիկը որուն ողորմեցաւ Պ. Մանեօ: Ողորմինք նամանականդ ՉՍՏԿԻ ասթիւ:

## ՔԱՂԱՔԱԿԱՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

Հարուստին Ափրիկէի պատերազմը զիս շարունակուելու վրայ է, բայց թէ ինչ կ'անցնի կը գառնայ, այս մասին հետազոտները չենքով չնորհ: Ըրով տեղեկութիւններ բերած չունին: Ըստ երևոյթին Լորտ Բիչնէր ասեանէ մը ի վեր լուսթիւն կը պահէ, կարծես նպատակաւոր, երկու շաբաթը անգամ մը հազիւ պատերազմի գաշտէն լուրեր հագորդելով:

Միայն թէ պատերազմի մէջ մեռնողներու և վիրաւորուողներու ասորեայ մէկ ցանկը կը հրատարակուի, որուն նայելով՝ բաւական կ'օրինակ տեղի ունեցած պիտի ըլլան:

Ապրիլ 10ին քաշուած հետազոտի մը համաձայն՝ զօրովար Պօթա համալուս գոյացուցեր է թէ մինչև ցարդ հաշտութեան կնքուելուն խոչընդոտ եղած է Տըվէթ, և նկատելով որ իր կուսակիցներն ալ հետազոտէ քիչնալու վրայ են, փախաք յայտներ է բանակցել յանուն բովանդակ Պօթաներուն:

## ԵՐԵՎԱՆԻ ԴԱՍԱՐԱՆՆԵՐ

... Վարչութիւն «Նոր-Օր» Լրագրի

Անպատու հանցքով կարգացներ «Նոր-Օր» թի 79րդ. Թաթի խիտ շահեկան խոմբագրականը. հարեանցի հետաքրքրութեամբ մը չկրնար կրնար արդարև կարող զրուցիւն մը որ պարզապէս մեր կենսական շահերը կ'ակնարկէ:

Արհեստաւորներ ենք մենք, ստորագրեալքս, գործատուներ, խանութպաններ, պատիկ ամուսնանով և կամ օրը օրին «բերտամբ երեսաց մեքոց» հացերիս ճարտը մարդիկներ: Հացը ճարել, օտար երկրի մէջ, ասանց ուրիշին «միւլթաճ» ըլլալու, այնպիսի օր մը մանաւանդ երբ կամաց կամաց փոխադարձ եղալայրկցական օգնութիւնն ու ազդաւորութիւնը տեղի կուտան մարդկային

ընական նիւթապաշտօնական, հացը ճարել, կ'ըսենք, կարճութիւն մ'է որուն համար փառք կուտանք Աստուծոյ, օրհնելով մեր բազուկները:

Ընկ մեր փորը կշտացնելով չենք կրնար սակայն գոհ մնացած ըլլալ ու վազուան վրայ չխորհիլ:

Ներկայ նոր դարու արշալոյսին՝ երբ ուսումնական գիտութիւն կը պահանջուին ամեն մարդէ, երբ կենսապայքարի խոշոր մրցանակը կը մնայ անոնց՝ որ բազմին կամ գեղարարական մետաղին հետ այս առաւելութիւններն ունին, մինքն ալ ցերեկուան ըրրտնութեամբ աշխատութեան վերջ՝ երեկոյն պահ մը մտամտութեամբ կը խորհնէր մեր ներկային ու ապագային վրայ, այն տեւոր մտածումով թէ գիտութեան քննարկը պահանջուած ուսումնական, թէ այն որդարմիջի գաւառը ուր մեր մանկական երեւուն օրրանը գտանք, ինչպէ՞ս աւելցնենք անոնց անհատական եղանակ մեր կրթական դարգացման:

Այս գագուտով է մեր դեռ երկուստարկ տարբեր մէջ, չզգալ ուրեմն երեկոյնական դասարանի մը անհրաժեշտ պետքը, է՛հ, կուրծքովն է ասի, տխմարութեան ամենէն դատապարտելին չըսելու համար:

Չենք կրնար երեկոյնական մ'աւելի գործնական, աւելի լոյսը դիւրօրէն մեզի ընտելացնելու նպատակադրմամբ, բան երեկոյնական վարժարան մը մեզի պէս չափահասներուն համար: Պարզ ընթերցաստան, մամուլ, լրարան, թատրոն, այս ամէնը լաւ երբ մարդ ինամուտ կրթութիւն մը առած է արդէն, բայց առնցքէ և ոչ մին, թերուաներուն համար, չէ կարելի որ բազմատեղեան գրուի երեկոյնական վարժարանի մը հետ, որուն յառաջ բերած անմիջական արդիւնքներն անմիտելի ըլլալու են:

Այսօր չէ միայն որ կ'զգանք երեկոյնական վարժարանի մը պէտքը:

Ո՞րն է այն արթուն ու զգայուն երիտասարդը որ օտար հողի վրայ, թիչ մ'օտար լեզուներ սովորելու փափաքը ունեցած չ'ըլլայ: «Կամենալ կարենալ ըսել է» կ'ըսէ առածի կարգ անցած ճշմարտութիւնը. և սակայն մեզի պէս գործարարներ, ընտանիքի տէր ալ թերևս, ինչպէս կրնային մասնաւոր օտարացի մ'ունենալ, ամբողջ առ նուազն Վ նարօղտն վճարելու պայմանաւ, և թէ մէկ կամ երկու հոգիով դատարանները պիտի ունենայ այն արդիւնքը, այն հրապոյրը, որբան հաւաքակալով:

Երեկոյնական վարժարան մը՝ ընթերցաստանով մը, հոն, ուր հաւաքուիւնք ամեն երեկոյ, դիւրաբ ճանչնայինք, հոն, ուր զբաղմունք ինչ որ մենք կը պահանջուինք. հայեւրէն, ֆրանսերէն, անգլիերէն, աշխարհագրութիւն, բիշ մը պատմութիւն, բիշ մը ընագիտութիւն, մտքնամարտութիւն, բիշ մ'ամեն բանէ, ինչպէ՛ չ'ըսել բիշ մ'ալ դաշնակ երգեցողութեամբ. կայ միթէ մեզի համար ասիէ աւելի օգտակար և հաճոյալի բան մը . . . :

Թերուտ ու գծադր, բայց զգայուն ու հասակառու երկուստարդներ ծափահարելով պետք է ողջունեն այսպիսի ազգօգուտ ձեռնարկի մ'աւետարտը, ձեռնարկ՝ որուն կը սպասենք որ ամեն Հայ շահագրգռուի:

Մեծ գործադրութիւն մը պիտի ըլլար այն օր, երբ ալ վճատած կրթութեան ձեռնարկներու յարասան անցողութեանն, որիչ շատերու նման հրապարակին բաշտին այն փոքրաթիւ գործիչներն ալ, որոնք դեռ շատ մը բաներ ընելու բարի արամարտութիւն ցոյց կուտան:

Երիտասարդական եռուզեռումն անդ՝ մտնելովն պիտի տիրէ, որբաւերներու գործունէութիւնը ի հաշիւ չ'առնելով:

Աստուած ողորմի՛ այն առնե մեզի պէս երիտասարդներուն:

Ձրի դաստիարակութիւն կ'ըսէք, Տ. Խորբազիր, բայց նիստով որ «անամալի» ի մայրաքաղաքին մէջ ապահովարար չպիտի գտնուի բարեբար մը որ վարժարանի ապագան ապահովելու գէթ փաստութեանն ունենայ, կարող էր փոստահարին մեզ թէ Հայուն մանուսանդ ձրի ձեռնարկը պիտի կրնայ տեսականութիւն ունենալ:

Ամեն պարագայի մէջ կը կարծենք, որ անձնուկներ չպիտի պակսին, մանաւանդ աղբայրին վարժարանի ուսուցչական դասուն մէջ, ու կը մնանք որ մեզի բազմալից չափահաս երիտասարդներ օրուան ստիպողական պահանջութեանը գիտակցութիւնն ունենան:

Այս առթիւ հոգածու աշակցութիւնը կը խնդրենք Սրբազան Առաջնորդին, որմէ հանրային կրթական գործունէութիւն մը կ'աւերակենք:

Անգամ մ'ես խնդրեցիք ձեր առաջադրած բարենպաստական ձեռնարկին առթիւ և յաջողութիւն մաղթելով Պատ. Վարչութեանը՝ կը մատուցանենք ձեզ մեր սրտագին շնորհակալութիւնները:

ՍՏՈՐԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Դ. Խելագարութեան պատճառաւ անբարտաւան գատեւները, որոց կատարելապէս անողջացեալ ըլլալը օրինաւոր կերպիւ հաստատուած չ'ըլլայ:

Յօդ. 68. Ընտրելի են Աղղին այն ամեն անհատները, որոնք 30 տարին լրացուցած ըլլալով. Օտմանեան հիպատակ, Տերութեան օրինացը սեղեակ. և Աղղային գործոց հմուտ են. և ընտրութեան իրաւունքին ըստ 67-երորդ յօդուածոյ զրկուած չեն:

Բայց կուտանդուպոյ թաղերուն կողմէն ընտրուելիք ութուն երեսփոխանաց գանձ եթէ՛ աստիճանաւոր անձինք ըլլալու են:

Բ. Եղսեակ ընտրութեան.

Յօդ. 69. Կուտանդուպոյ թաղերին և գաւառներին ընտրուելիք Երեսփոխանաց յաշիւմսն ցուցակը չիւնելու համար, ամեն երկու տարի փոփոխուած ամաց սկիզբը՝ Աղղային կրօնական և փառաբանական ժողովները, Տեսուչ Խորհրդոց Աւետարաններուն հետ մէկտեղելով Համախորհուրդ ժողով կը կազմեն, և Պատրիարքական Գիւանաստան ընդհանուր Ազգահամարին նախելով, ամեն մէկ թաղին ու գաւառին կողմէն բանի՛ Երեսփոխան ընտրուելիք կ'որոշեն, Պօստոյ թաղերուն համար՝ ընտրուած թիւը, և գաւառներուն համար՝ բնակչաց թիւը հիմն բանելով: Եւ այս կերպով շինուած ցուցակին համեմատ՝ իւրաքանչիւր թաղի և գաւառի տալու Երեսփոխանաց թիւը Պատրիարքի ձեռքը անոնց կը ծանուցանեն:

ՔԱՏՎԱՆՈՐ

«Նոր-Օր»ի 84րդ. թիւին մէջ «Չատիկ առթիւ» խորագրին տակ վիճարանութեան գինը ուղարկելու ի պատասխան երկու տող գրել պիտի ներուի ինչ անշուշտ:

Աստուածարանի մը թողով Սարգիս Գիրքին փաստեր յառաջ բերել և անոր վերջնական վճիռը տալ, ես կը փորձեմ յայտնել այս մասին իմ կարծիքս, այնպէս ինչպէս որ կըմտնեմ:

Խնդիրը բանի որ կրօնական երեսփոխան մը տակ կը ներկայանայ մեզ, նախ սկսեք է զինանք թէ ինչ է Եկեղեցին և անոր նշանակութիւնը:

Եկեղեցին Մեծ Հիմնադիրը փրկատու ըսած է, «Տուն իմ տուն Աստուծոյ կոչեցի»:

Հետեւաբար Աստուծոյ տունն է ան, ուր բարեպաշտ հաւատացեալներ, ինչ հասակի մէջ ըլլան և ինչ սեռի որ պատկանին, բով բովի հաւասարապէս կրնան նստիլ և անկարգաբար կրնան վայելիլ հաւասար այն կազմութիւնը բաղկացնելու, զոր կուտայ նոյն ինքն քրիստոնէութեան խորիւրդ կազմող սրբալոյսը, Եկեղեցին:

Միայն թէ զիտելու արծանի կէտ մը եթէ կայ, այն ալ զգացումն է, զոր մարդ ընտանաբան ունի իր մէջ, ու շատեր միջավայրի արականիչ ազդեցութեան ենթարկուած՝ դուր յոռին կը գործածեն բնութեան այլ պարզիք, և չնայելով որ Աստուծոյ ասանք մէջ և անոր սուրբ խորանին առջև կը գտնուին, թիւղարեալ այլ զգացումն, աչքերին կը մագնիսանայ հոն, ուր որ կը աւանան գեղեցիկ սեռը, արդուարդի և անուշահոտ բուրբոններու հմայեցողիչ հրապարանքին մէջ:

Եթէ խնդրոյն երկու ձեւերն մէկը ընդունինք, այսինքն պահ մը զեղեցիկ սեռը փոխարեւը վերը, ինչպէս որ ըսուած է, մեր փափաքը լրացած չպիտի ըլլայ, որովհետեւ պիտի գտնուին շատեր, որ աւելի բիրտ կերպով իրենց գոտիները դարձնեն ես, և աչքերին սեռուն վեր վանդակներն դուր ներս, և կամ ժամատուցութեան առջև կամ վերջը, զորքը գաւիթին շուրջը դեղերին:

Ուրեմն սխալ է խորհիլ թէ՛ գտնուի իւրաքանչիւր բաժան պահելով, բաղձնուած բարոյական ազդեցութիւնը պիտի կրնայ յառաջ գալ՝ նուիրական վայրի պահանջմանցը

համապատասխան և կամ ուրիշ տեսակ ըսենք, «Հոգեմտոր փորձութիւններ» ասու ջբը պիտի կրնայ անուելի:

Եթէ վերջնականապէս ընդունինք զայս, այն առնե ընտանեկան հանդիսաւոր համախորհուրդներու մէջ և հարսանեաց, պատկի եայլն սրբազան խորհուրդներու միջոցին, եկեղեցոյ լուսափայլ շահերուն տակ, անհրաժեշտ պիտի ըլլայ երկու սեռը բարձեալ իրարմէ զատել, որով տեսակ մը բարոյաբարձ գործուած կ'ըլլայ նուազաւորութեան իւրաքանչիւր սկզբունքին վեր:

Այս պատճառներով կը կարծուի թէ՛ այլ կողմ յարողին մտածման եղանակը արատոց ըլլալէ աւելի՛ դեպ ի նշանակաւոր խորհրդածութիւններուն կ'առաջնորդէ գալու:

Հետեւաբար ասիէ պիտի կրնամ երբեք իմ կեկեղեցին մէջ նոր կարգ ու սարքեր ներմուծել աւելի, ջանալ պետք է բարոյական զարգացմանը և կրթութեան՝ գորաւոր թափով մղում տալ և երբ այլ ջանքերը պատկանին այն առնե անդամները կրնան զգալ գիտնալ, այդպիսի նուիրական վայրերու մէջ՝ իրենց մեղադրելի ընթացքը:

Ուրեմն Պ. Ս. Օ. գերազանցապէս օգտակար գործ մը կատարած պիտի ըլլար, փոխանակ այդպիսի նուազ կարեւոր խնդրոյ մը, զարգացումի և յարողական կրթութեան գործը յառաջ տանելու համար միջոցներ վիճարանութեան գնելով:

Կ. ԵՐԶԻՆՅԱՆ

Գահիրէ 11 Ապրիլ 1901

Ա. Զ. Գ. Ա. Յ. Ի. Ն.

Կ'իմանանք թէ Ն. Բ. իշխան Գուխտոն Լուսինեանի բարեխօսութեամբ փարեղաբանակ Գեղամանայի մը 300 ֆրանք զրկած է տեղւոյս սրբախնամ մ'ատենապետի հասցէին, որբերու յատկացուելու համար:

—Անգլիական լրագրիները հրատարակած կին թէ Տէրքան և ձէպրանի ցեղերէն ֆիւրաբեր յարձակեր են Կարինի Խնուս գաւառի Սիրնաք վելլին վրայ և կուտին մէջ 19 մարդ սպանուեր և 2 մարդ ալ վիրաւորուեր են: Բիւրտերն յաջողի են շատ մը պաշարեղէն և կենդանիներ յափշտակել տանիլ:

Ներք և կամ գաւառի մը բնակչաց թիւը աւելցած կամ պակաս է, այն թաղին կամ գաւառին տալու Երեսփոխանաց թիւն ալ համեմատութեամբ պիտի աւելնայ կամ պակաս:

Վախճանեալ կամ հրաժարեալ Երեսփոխանաց սեղ ընտրուելիք անձինքն ալ՝ ամեն տարի տարեկան երկու ամիս առաջ պէտք է ընտրուին:

Թաղական Երեսփոխանները կուտանդուպոյ թաղերուն բնակչաց կողմէն պիտի ընտրուին: Իսկ գաւառական Երեսփոխանները իւրաքանչիւր գաւառի Ընդհանուր ժողովոյ կողմէն պիտի ընտրուին:

Յօդ. 70. Թէ՛ Պօստոյ թաղերն և թէ՛ գաւառներն ուղարկուած Երեսփոխանները՝ հարկ չէ որ ընտրող թաղին կամ գաւառին բնակիչներն ըլլան. բաւական է որ կուտանդուպոյ մէջ բնակին. իրենց ներկայացուցած թաղին կամ գաւառին ազգային գործոցը հմուտ ըլլան, և ազգասիրութեամբ, ուղղութեամբ և արդարախոհութեամբ՝ ընտրուաց յարգն ու համարումը ստացած անձինք ըլլան:

Բայց աւելի յետոյ Կ. Պոլսէն ֆրանսական լրագրորէնքն եկած տեղեկութիւն մը կ'ըսէ թէ «Քիւրտերը Սիրնաք գիւղը կուզուած, հայ ընտանիքները մեծ մասը կուտորած և կիներն ու արջառններն յափշտակած տարած են: Թիւրք զօրքերը կարելի եղածին չափ շուտ վազելով եկած և գիւղը բոցերու մէջ գտած են. 500ի չափ Հայեր սպաննուած են: Քիւրտերը ամեն վիրաւորուածները բռնել բոցերու մէջ նետեր են:

—Տրագիդոնի Հայերն իրենց առաջնորդ ընտրել են Մուշի առաջնորդական տեղապահ Տ. Բարզէն Ծ. Վ. Կիւլէսընեան որ Մուշի կառավարին հետ ունեցած սնհամաձայնութիւններուն պատճառով Կ. Պոլսու բերուած էր:

ԹՂԹԱԿՅՈՒԹԻՒՆ ՓԱՐԻՉԷՆ

4 Մարտ 1901

Շարք էրեւոյ (մարտ 28 ին) մասը Ծր քառորդ անցած, Գաֆէ Վոլթէրի վերստին սրահներէն միայն մէջ տեղի ունեցաւ հայկական փոքրիկ երկնայի մը, ընդ նախադասութեամբ Պ. Մինաս Չերազի:

Պ. Նախագահը նախ խօսք տուաւ երգեցիկ խմբին որ —բողոքացած 8-10 հոգիներէ — երգեց՝ անուանաւ Ալիշանի «Նախք արտան» ոգևորիչ, բայց, դժբաղդար, հասարակ մտահամայնութեամբ (ժողովրդին) անհասկանալի (զրօրար լինելուն համար) երգը: Ետեայ խօսք առաւ անուանայ Պր. Միքայէլ Յովհաննէսեանը և խօսեցաւ մեր վերջին 10 տարուան պատմութեան վրայ, բաւական անկողմնակալ, սահուն և ճարտար սեռով և գաղտնիքներով: Պր. ճառարտը սեռ 20 վայրկեան անընդհատ խօսեցաւ, գովեց հայ երիտասարդութեան 5-6 տարի առաջուան խանգը ու ետանդը, պատարակեց և կամ աւելի ճիշդ՝ մտանցողը ըրաւ անոր և առհասարակ Հայերու այսօրուան անտարբերութիւնը, յաւաստութիւնը, անգործութիւնը: Մի քանի անգամ ծախհարութեան պիտանացաւ յարգելի բանաստեղծ որ իր խօսակցութիւնը վերջացուց, Պր. Չերազին սի քանի գովատանական խօսք ուղղելով: Հետախօսութեան յաջորդեց դարձեալ երգեցողութիւն «Ո՛վ դու բարեկամ» և «Մեր Հոյրերի» և Յետոյ Պր. Չերազ խօսք տուաւ և սեռ մէկ քառորդ մտած չափ խօսեցաւ ու քաջութեան վրայ ըստ ավարտութիւն թողուց: Բուսական խնդրացոյց պատմելով մէկ զար առաջուան Կ. Պոլսոյ Հայոց

կեանքէն դանդաղան անցրել և կետեր, Պր. վինի վիճակ ուղղին ներկայ եղող հայ Մեծիկերու նիստ ու կայքը, եպիս:

Երեկոյն վերջացաւ «Նախք արտան» կրթութեամբ և Չէլիքտի քայլերով:

Հայտնակ այն անշին կարծիքին թէ Հայերն անտարբեր են առհասարակ հասարակութեան, այդ երեկոյնին ներկայ կին մտա 200 հոգի սրտով 8-10 կր պատկառելին խոսան սեռին Արական սեռին պատկանողներու մեծագոյն մասը երիտասարդներ էին: (ՓԱՐԻՆ ՆՈՒՊԷՆ)

Տ Ե Ղ Ա Կ Ա Ն

—Պր. Բարզէն կը հեռագրեն թէ Ֆիլիպարի առողջութիւնը խանգարած ըլլալուն ազատ արձակուած է, այն պայմանաւ որ եղիպտոս չի վերադառնայ:

—Յառաջիկայ երկուշաբթի Շամիլ-նէսիմի աթիւ կառավարութեան պաշտօնատեղիները փակ պիտի մնան:

ՎԵՐՋԻՆ ԺԱՍՊ

Երեկուան Հովաթի հեռագիր մը կը ծանուցանէ թէ Կ. Պոլսոյ Պատրիարքը հրատարական մատուցած է:

ՀՈՍԿԷ ՀՈՆԿԷ

ԳԼԻ ՄՍԲԳՈՑ ԱՐԻՒՆԸ.— Ընդհանրապէս նիւթագրուած է թէ զեր մարդիկ նիւթարներէ շատ աւելի աւրին ունին, բայց ճշմարտութիւնը հակառակն է, մանաւանդ թէ զերերու արիւնն իրապէս աղքատ է, և ճարպը կը խնու նորա չըջանին համար պէտք եղած միջոցը: Ուրեմն գործարանաց բուն աշխատելու իրողութիւնը զարգացնելու չափ արիւն չունենալով՝ և մանաւորապէս գործելու միջոցին պէտք եղած տոնն, բաւական ազատութեամբ զէպ ի զարծարանները հոտոյ արիւնը ճարպէն արգիլուելով՝ կը նշանակէ թէ զերերը նիւթարներէն նուազ կենսական կարող կրնան ունենալ: Ասանցմէ

զտա՝ ճարպը կ'արգիլէ թուրքու ազատ շարժումը. այնպէս որ, տրեան դաման համար բաւական ոչ չի կարենալով տարբարութիւն, բնական և հարկաւոր կիզումը այնքան կը խափանուի ու կը նուազի որ, մարմնայն պաշտօններուն արդեւք մը կը գառնայ: Արգ, աստի կրնանք հետեցնել թէ՛ յոյր և ճարպային մարդիկ բընա ծայրագոյն աշխատութեան չեն գար, և թէ՛ երբէք չէ կարելի աննցմէ շատ բան ախկալել:

ԳՈՐԾՈՒԹՅՈՒՆ ԹՂԹՈՅ.— Անշուշտ շատեր կը կարծեն զեռ թէ թուղթը միայն աղագրութեան և զրկելու կը ծառայէ. հետեւեալ համառոտ նկարագիրը կը ցուցնէ թէ որչափ բազմաթիւ ուրիշ գործածութիւններ ևս ունի, որով ամենապիտանի նախնական նիւթ մը դառնալու վրայ է:

Երբայայնի մէջ այսօր հազուադէպ չէ տեսնել վայելչագրեալ անձեր որ թղթեայ վզնոցներ, թիւնոցներ և շապիկներ կը հագնին: Նիւ-Եօրթի մէջ գործատուն մը կը շինէ թղթեայ անկողններ, բարձր և բարձիկներ որ թէ՛ թէթե են և թէ՛ խիստ տաք կը պահեն: Ուրիշ գործարան մը կը պատրաստէ կոշիկներ և այլ սանամաններ, դարձեալ թղթեայ, որ անխափանց են ջրոյ և շատ տաք կը պահեն: Կը շինուին նաև թղթեայ նաւակներ և թիւր: Թղթոյ խմորը շագուելով բընառակտակի, կրի և պաղպղի հետ, կը շինեն տակառներ և ուրիշ անթիւներ որք փայտէն աւելի կը դիմանան և հեղուկներու փոխադրութեան աւելի բաւ կը յարմարին: Վերջերս ըսկըսած են նաև շինել շէշեր՝ որք չկողորելու յատկութիւնն ունին և դռներ որք չեն ծոխր փայտեայ դռներու նման: Իսկ իբր գանազան կարասիք, կեանքներ, շրջանակներ եւ այլն, թղթոյ գործածութիւնը սովորական եղած է, մանաւանդ յԱմերիկա: Վերջապէս 6000է աւելի շոգեկառքի քողքեայ անխմեր կը շրջին այսօր Նիւ-Եօրթի Չիքսհոյի գծին

վրայ: Թղթեայ անիւններ, պիտի բուսէր: Մի զարմանալի, հետի չէ այն օրն յորում մենք ևս անձամբ պիտի տեսնենք թղթոյ այդ հրաշալիքներն: հետի չէ այն օրն յորում վերջապէս քողքեայ սուսնու մէջ ևս պիտի բընակինք մենք ևս:

ԾԱԽՈՒ ՀՈՂ

Այն-Եր-Շեմաի կայարանէն 12 վայրկեան հեռաւորութեամբ ֆաֆր-կամուս անուն պիւղին սաջև 10 ֆէտոսան հող ծախու հանուած է Տիար Արմենակ Աստուածատուրեանի կողմանէ ամսական վճարումներով: Սոյն հողը բաժնուած է 42 կտորի, իւրաքանչիւրը 1,000 քառակուսի մէթր տարածութեամբ և ամեն մէկ կտորը պիտի ծախուի 2,000 դրուշի: Յատակագծին և այլ տեղեկութեանց համար դիմել առ Տիար Արմենակ Աստուածատուրեան ի Գաւհիբէ: 4-4

ԿԱՐԵՆՈՐ ԱԶԳԻ

«Նոր-Օր»-ի Ա. տարեշրջանը կատարու մտա ըլլալով, յառաջիկայ շաբաթ օրուան թուով պիտի հրատարակենք տարեկան լ'նգհ. Հաշուեկրչիւք, հաղորձ մանրամանն ծանօթութիւններով:

Սոյն Հաշուեկրչին պիտի կցենք նաև բոլոր բաժանորդներուն անունները, իրենց վճարումներովը: Հետեւաբար անոնք որ մինչև ցարդ չեն վճարած, հաճին գէթ առ ի կանոնաւորութիւն մեր հաշուի, փութով դրկել իրենց բաժնեկիւր, մինչև յառաջիկայ ուրբաթ:

Յառաջիկայ չորեքշաբթի Չատակահան տօներու աթիւ «Նոր-Օր» չի պիտի հրատարակուի:

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

ԻՏԱԼԻԱ ԵՐ ՏՐԱՆՍՍԻ Ի ՅՈՒՐԻՍ  
Ապրիլ 10ին կը հեռագրեն թիւ 10նէն:

Ազգային Երեսփոխանները ո'չ թէ դիւրեմը ընտրող թաղին կամ գաւառին Երեսփոխանները կը համարուին Ընդհանուր ժողովոյ մէջ, այլ Ազգին Երեսփոխաններն են՝ համազօր իշխանութեամբ:

Յօդ. 74. Երկու տարին անգամ մը Պօլսոյ թաղերուն կողմէն ընտրուելիք Երեսփոխանաց հինգերորդ մասին համար՝ Պատրիարքը փետրուար ամսոյ մէջ ընտրող թաղերուն ամեն մէկուն կը ծանուցանէ քանի՛ Երեսփոխան ընտրելիքը՝ ընտրողութեան և ընտրելութեան պայմաններն ալ յիշեցունելով:

Այս ծանուցման վրայ՝ թաղական խորհուրդները Երեսփոխանաց ընտրութեանը կը ձեռնարկեն: Բայց ընտրական գործողութեանց համար թաղին Գարդիլը՝ կամ անոր չը գտնուած ժամանակը՝ Աւագերէցը նախագահութիւն կ'ընէ, և թաղին բնակիչներէն երեքն մինչև վեց պատուաւոր անձինք թաղական խորհուրդին վրայ կ'աւելցրին:

Այս կերպով կազմուած Ընտրողական Ժողովներուն ամեն մէկը՝ իր թաղին մէջ

ընտրողութեան իրաւունք անեցողներն ըստուգելով, այրօքնի կարգու ընտրողաց ցումիկ մը կը պատրաստէ, և աթ օր բաց մնալու պայմանաւ թաղական խորհրդարանի մէջ կախել կուտայ:

Ընտրողական Ժողովը ընտրողաց որոշումը գիրացունելու համար՝ ուղղուած Երեսփոխաններուն թիւն և սպառակ աւելի ընտրելիաց ցուցակ մըն ալ կը պատրաստէ, և այն ալ կախել կուտայ խորհրդարանին մէջ: Սակայն ընտրող ամենին պարտաւորեալ չեն ընտրելեաց ցուցակին հետեւելու:

Գաւառներուն մէջ ալ՝ պատահական Ընդհանուր Ժողովոյ անպաշտներ միեւնոյն կերպով կ'ընտրուին:

Գ. Բուհարկուրիւն

Յօդ. 72. Ընտրողաց ցանկին բացուելն շարաթ մը ետքը՝ կիրակէ առաւօտ, ժամերգութեան աւարտմանն ետքը, թաղական խորհրդարանի մէջ բուհարկութեան կը սկսուի սապէս:

Թաղական խորհրդոյ նախագահը՝ ընտրողաց ցանկը ձեռքն առած կարգու կը կանչէ ընտրողները, որք ընտրողաց ցանկին մէջ իրենց անունն առջև ստորագրելին վերջը, քանի՛ Երեսփոխան ուզուած է նէ՛ այնքան անձանց անուն թղթի մը վրայ կը գրեն վերին ի վար կարգու. և ամեն մէկ անուան առջև մականուն, բնակութիւն և արուեստ նշանակելով՝ թուղթը կը ծալին, և յատկապէս պատրաստուած բուհարկութիւն մէջ կը ձգեն: Իսկ եթէ ընտրողը պատճառ իւր չը կրնան գալ խորհրդարան, ստորագրեալ նամակաւ մը բուհարկութիւնը կ'արկին:

Յօդ. 73. Բուհարկութիւնը գաղտնի է. ուստի պէտք է որ բուհարկութեան ամենին գրեն իրենց բուհարկութիւնը, որպէսզի ուրիշ մը չը կրնայ տեսնել գրած անունները:

Յօդ. 74. Բուհարկութիւնը սկսած օրը պէտք է ըլլայ: Ընտրողներն ո'վ որ իր բուհարկութեան անունը չի ներկայացունէ, ետքը բողոքելու իրաւունք չունի:

Յօդ. 75. Ոչ ոք պիտի կարենայ միանգամայն երկու թաղի մէջ բուհարկութիւնը:

Յօդ. 76. Ընտրողական մասին միանգամայն ցանկը ձեռքն առած կարգու կը կանչէ ընտրողները, որք ընտրողաց ցանկին մէջ իրենց անունն առջև ստորագրելին վերջը, քանի՛ Երեսփոխան ուզուած է նէ՛ այնքան անձանց անուն թղթի մը վրայ կը գրեն վերին ի վար կարգու. և ամեն մէկ անուան առջև մականուն, բնակութիւն և արուեստ նշանակելով՝ թուղթը կը ծալին, և յատկապէս պատրաստուած բուհարկութիւն մէջ կը ձգեն: Իսկ եթէ ընտրողը պատճառ իւր չը կրնան գալ խորհրդարան, ստորագրեալ նամակաւ մը բուհարկութիւնը կ'արկին:

ցեալ թաղերը և թեմերը՝ եթէ իրարու մտա ըլլան, ընտրողները մէկ սեղ ժողովակալութեամբ կ'ընեն: Իսկ եթէ իրարմէ հետի ըլլան՝ իւրաքանչիւր թաղ կամ թեմ գառ բուհարկութիւն կ'ընէ. և ետքը երկու կողման բուհարկութեանց արդիւնքը կը միացունեն:

Յօդ. 77. Բուհարկութիւնը կատարուելն ետքը, նոյն օրը միեւնոյն նիստի մէջ՝ թաղական խորհուրդին առջև բուհարկութիւնը կը բացուի. և այս բանին համար սրտուած փնտիչները բուհարկութեան համար, բուհարկութեանց թուղթին հետ կը բաղադան:

Եթէ տարբերութիւն գտնուի, և թաղական խորհուրդը խորհրդութեան կատարած անունաց, մինչև առաջիկայ կիրակի՝ մեռ օր մը նորին բուհարկութիւն ընել կ'որոշուի:

Նմանապէս՝ եթէ ուղղուած Երեսփոխանաց թիւր տուղթին անգամին չը լցուի, մնացածին համար երկրորդ անգամ բուհարկութիւն կ'ըլլայ միւս օր մը:

(Շարունակելի)

Ֆրանսայի Նախագահը Պ. Լուպէ ընկերակցութեամբ Ծովային Գործոց Նախարար Պ. Լանէսսանի և ուրիշ պաշտօնական անձինքներու, ժամը 1 ու կէսին «Սէն Լուի» զբահաւորով թուլօն հասաւ:

Ֆրանսական և իտալական բոլոր մարտանաւերը որ թուլօնի շուրջըն վրայ միացած էին, յարգանք ոգւ շունեցին Ֆրանսայի Նախագահին զալուստը: Նախագահը անմիջապէս Ծովային պաշտօնարանը իջաւ:

Ժամը 3ին, Ճէնովայի դուքսը որ իտալական նաւատորմիցին հրամանատարն է, իրեն հետեորդներովը ի միասին այցելութիւն տուաւ Պ. Լուպէի և անձամբ յանձնեց «Միոն-սիաս» չքանչաւր: Քանի մը վայրկեան վերջը, Նախագահը փոխադարձ այցելութիւն տուաւ Ճէնովայի դուքսին «Լէբանթօ» նաւուն մէջ: Պ. Տէլբասէ Ֆրանսայի Արտաքին Գործոց Նախարարը, Գուբին յանձնեց փոխադարձաբար չքանչաւր մը Պատուոյ Լէպէնի:

Արարողութեան լմնալուսն մօտ, Ֆրանսայի Նախագահը չքեղ հացկերոյթ մը տուաւ ի պատիւ երկու Տէրութեանց զբահաւորներուն: Նախագահը հեռագրաւ իր ինքնակցութիւնը արտայայտեց իտալոյ վիզիթօր-էմբանտէլ թագաւորին, այս հանդիսաւոր օրուան առթիւ:

Նոյն օրը Գահիրէի և Աղեքսանդրոյ իտալական և ֆրանսական զաղթականութիւններն ևս հանդէս մը սարքեցին ի նշան համակրութեան:

**ՏՈՒՒԱ ՄԻԻՋԻԼՄԱՆ**  
(ԻՍԼԱՄԱԿԱՆ ՕՐԷՆՍԻՒՅՈՒԹԻՒՆ)

**Ս. ՓԱՓԱՋԵԱՆ**

Սոյն հրատարակութեան առաջին մասը՝ Եզրկազմական արդարութեան Գործոց Նախարարութեան կողմէն նիւթական վարձատրութեամբ գնահատուած և Եզրկազմի դատարաններուն մէջ գործածութիւնը պաշտօնապէս ընդունուած է:

**ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ**

Ընդհ. տեսութիւն ժառանգական գրկնաց և ժառանգութեան իրաւանց զազման վրայ. — Ժառանգութեան պայմանները. — Աղղականութիւն և աստիճանները. — Գերութիւն և ժառանգութեան հետ ունեցած կապերը. — Ժառանգութեան զրկող պատճառներ. — Մարդասպաններու ժառանգութիւնը. — Տիէթ (մարդու արեան զինը). — Ժառանգութեան մը պարտքը և պահանջը. — Ժառանգորդներու կարգը իրենց աստիճաններովը:

Ժառանգութեան օրէնքին տրամադրութիւնները արդոյն ուրոյն մեկնուած են: Գրքոյկին վերջը գրուած է ցանկ մը որ մատչելի եղանակաւ կը նշանակէ թէ ժառանգութեան օրինական բաժինները ինչպէս կը բաժնուին:

Երկրորդ մասը մօտ ժամանակէ ըստ պիտի տեսնէ՝ ինամակալութեան կտակի, Սպանութեան, Արեան Գնոյ վրայ ընդարձակ ծանօթութիւններով: Գին 10 ԳԱՀ. ՈՂԶ

**Ա. Զ. Դ.**

Եզրկազմի, Արտասահմանի և կողակաւ արդոյ բաժանորդներէն անոնք որ մինչև ցարդ վճարած չեն իրենց բաժանորդագրիւնները, կը ինդրուի սր հաճին անյապաղ վճարել:

Եզրկազմի բաժանորդները կրնան Մանտո-Քոթով ուղարկել իրենց բաժանորդագրիւնները. թերթիս վերելը նշանակուած հասցէին:

**ԿՈՒՋԷՔ ԲԱՂԴԵՐՆԻՒՒ ՓՈՐՁԵԼ**

Գնեցէք Ժողովրդական Տարեցոյցէն հատ մը, ուր շատ մը զուարճիկ և օգտակար հաստատներու հետ կը գտնուի նաև գեղեցիկ բաղդացոյց մը պէտք եղած բացատրութեամբ:

Սոյն Տարեցոյցէն և Պարզ Օրացոյց գրեւէ փափաքողք թող հաճին զիմեւ առ Տ. Օհան Խնամական, որ պատուաւ է ուրիշ ամէն տեսակ զրքերու մասին յանձնարարութիւնը փութով կատարել փորձիկ կանխավճարով մը: Երկապ ջաղաքներէն Տարեցոյցի և Օրացոյցի մասին եղած յանձնարարութեան համար գրամի տեղ թըղթադրոյ՞ կընդունուի:

Տարեցոյցի գինը 10 ԳԱՀ. ողջ  
Պարզ օրացոյցիը 2 "

**Ա. Զ. Դ.**

Շատերու կողմէ յայտնուած փափաքի մը գոհացում ապրու և մեր ընթերցողներու գիտութիւն մը ընծայելու նպատակով, այսուհետև մեր թերթը հատով պիտի ծախուի Շարա Ապա-էլ-Ազիզի սկիզբը Պ. ԿԱՐԱՊԵՏ ԵՐՋՆԱՅԵԱՆԻ խանութը ինչպէս նաև Գրք-Պէյ փողոցի ծայրը և թըրամվէյներու կայարանին մօտ ճխուվաճառ Պ. ՄԱՐՏԻՐՈՍ ԳԱՍԱԳԵԱՆԻ քով:

Le Gérant J. MUNIER

**ՊԱՆԳ ԼԻՕՆԷՋ**

ԸՆԵՂԱՆՈՒՐ ԳՈՐԾԱԿԱՆ ԵԳԻՊՏՈՍԻ Մ. ԾՕՍՕՅԵԱՆ

Լիոնի հանրաժանութ գրամատուցը, այս անգամ ունեցաւ իւր Եզրկազմի գործակալնալ, Տ. ՄԿԻՐՄԻՅ Սօսոյան, որ իւր հրատարակչին ցոյց տուած պարկեշտ գործունէութեամբ ամենուս փառահալութիւնը կը վայելէ:

Սոյն գործակալութիւնը, 11 Սեպտ. թիւ իրեն յանձնուած և Լիոնի բաղաքագետութեան պաշտօնապէս վաւերացուած փոխանորդագրի համաձայն, պիտի կատարէ Պանգ Լիոնէզի միջոցաւ ամեն տեսակ գրամական և Քուէտի քօնախիչի, վիլ տը Բարիի և Գաղղիական ամէն արժեթուղթերու գործողութիւններ, գանձումներ: Ամսական չնչին գումարի մը խնայողութեամբ ձեռք կը բերուի քիչ ատենէն, պտհետի բաժնեթուղթ մը, վիճակահանութեամբ երաշխաւորուած:

Փափաքողները հաճին զիմեւ ներպատի վրայ փաստարան Ռարթարի գրասենեակը:

Թղթակցութիւն և կամ գրամ զըրկել հեռեկալ հասցէին:

Մ. ՍՕՍՕՅԵԱՆ  
Ի ԳԱՀԻՐԷ

**ԱՏԱՆԱԲՈՅԹ**  
**Պ. ՆԻԿՈՒԿԻՍՏՈՍ**

Վերջերս հաստատուած ի Գահիրէ, Գաֆէ տը ըս Պուրսի կից, Բ. յարկ թիւ 9 գաստիկոնը:

Կը բժշկէ բերնի և սկոպի ամեն տեսակ հիւանդութիւնները: Աղքատները ձրի կը գործանէ ամեն օր, առաւօտեան ժամը 8էն 9:

**ՊԵՒԱՆԵԱՆ-ՅԻՇՄԱՆԵԱՆ ԸՆԿ.**

ԱՄԵՐԻԿԵԱՆ ԳԵՐՁԱԿՆԵՐ

ԱՐԱՆՑ ԵՒ ՏԻԿՆԱՆՑ

ԵՒ ՉԵՒԱԳԻՏՈՒԹԵԱՆ ԳՊՐՈՑ

Ապօխի մեծ պոլոսային վրայ Տայիտայի Սանիթի դիմացը, նախկին եկեղեցական գործիներու վանաւանդը:

Վերջերս Ամերիկայէն հօս Էկաժ հաստատուած ըլլալով կը յայտարարենք արդոյ հասարակութեան թէ պատրաստ ենք գոհացնել մեզ զիմեւ Պատ. յաճախորդները, գործի մաքրութեան, գրկներու չափաւորութեան և ճշդապահութեան կողմէն:

Մեր գործատեղոյն մէջ կ'ուսանգուին նաև ձևագրութեան գասեր ամերիկեան ամենալեզնի կատարելագործուած մէթոտով:

Մանրամասնութեանց համար գիմել մեր գործատեղին:

**ՃԱՇԱՐԱՆ ՂԱՅԿԱԿԱՆ**

ՄԻՀՐԱՆ ԵՒ ԵՂԲ. ԳԱՋԱՆՃԵԱՆ

Շարա Ապու-Սապան

Նիւու-Տիբլիտայի դեղարանին դիմացը:

Օգտուան ու զուարճալի գիրք մաքուր ու վայելուչ սպասու համեզ ու անդարար կերակուրներու զանազանութիւն, անխարդախ պատրաստութիւն. ճոխ ճաշացուցակ մը զիւրամասշտի գրկներով: Եւ զազանեան եղաբայ ճաշարանը:

Ով որ կ'ուզէ, փորձի համար մէկ անգամ թող զիմէ, փառահ պէտք է ըլլայ թէ մտասկայ յաճախորդը պիտի գտանայ հոյակապ ճաշարանին:

Տպա. «Միւրքիւն».— Թ. Ս. Փափագրանի

**Տ Պ Ա Ր Կ Ա Ն**



**Ի ԳԱՀԻՐԷ**

ԱՊՏԻՆ ՓՈՂՈՑ, ՄՈՒԳԱԹԹԱՄԻ ՃԻՇԴ ԴԻՄԱՑ

**ՏԷՐ ԵՒ ՏՆՕՐԷՆ**

**ԹՈՒԳՈՄ Ս. ՓԱՓԱՋԵԱՆ**

Սոյն նորակազմ տպարանին մէջ կը տպուին հայերէն ու Լերոպական ըզուաւ ամեն տեսակ հրատարակութիւններ, պարբերական թերթեր, յայտարարութիւններ, չրջաբերականներ, այցիտոմներ, մահազգեր, հարսանեաց հրաւիրագրեր, կանոնադրներ, նամակազրուիւններ, պահարաններ, հաշուեցուցակներ ևն:

Յանձնարարութիւնները կը կատարուին փոքրով, ամենայն խնամով եւ ճաշակատր սպազրոյթեամբ:

ՉԱՓԱԻՈՐ ԳԻՆԵՐՈՎ